



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 11 ՆՈՅԵՄԲԵՐ, 2024

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, փոքր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալսս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 119

## ՔՈՒ ԽՕՍՔԵՐՈՒԴ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Յրաշալի եմ պատուիրաններդ,  
ահա թէ ինչու՝ ես կը գործադրեմ գանոնք:  
Քու խօսքերուդ մեկնութիւնը լոյս կը բերէ,  
կ'իմաստնացնէ պարզամիտները:  
Անյագօրէն փափաքեցայ խօսքերդ ներծծել,  
որովհետեւ ուզեցի քու պատուերներդ ցանկնալ:  
Նայէ ինձի եւ ողորմէ, ինչպէս ինքդ վնաս ես քեզ սիրողներուն համար:  
Քայլերս ամուր պահէ, քու խոստումիդ համաձայն.  
Քոյլ մի տար որ մեղքը վրաս իշխէ:  
Զիս ազատէ մարդոց գրպարտութենէն,  
որպէսզի կարենամ հրահանգներդ գործադրել:  
Քու ներկայութեամբդ օրհնէ զիս՝ քու ծառայ,  
եւ կանոններդ սորվեցուր ինձի:  
Յորդահոս արցունք կը թափեն աչքերս,  
տեսնելով՝ որ մարդիկ օրէնքդ չեն պահեր:

### ՇԱՐԱԿԱՆ

*Յոյս իմեա դու տէր քաւիչ յանցանաց իմոց.*

*մի անտես առնէր զբըղխումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ աստուած:*

### ԱՊՈԹՔ

Տէր Աստուած մեր, տուր մեզի շնորհքը, որպէսզի կարդանք Աստուածաշունչ Մատեանդ, բարեպաշտ հաւատքով, յօժար սրտով ու սիրով ականջ դնենք անոր մէջ պարունակուած բոլոր խօսքերուն: Աներկմիտ հաւատքով հաւատալու եւ ընդունելու անոր մէջ բովանդակուած ճշմարտութիւնը, որպէսզի անխախտ յոյսով ապաւինինք խոստացուած բարիքներուն եւ հասնինք յաւիտեանական կեանքին՝ Սուրբ Հոգիիդ շնորհքովը. Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)*

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

## ՇԱՐԿԱՆ-ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոյ արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղեղոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## ՍԱՂՄՈՍ 73

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

**Ի**րաւ որ Աստուած բարի է իր ժողովուրդին հանդէպ,  
անոնց՝ որոնք սրտով մաքուր են:  
Ես գրեթէ կորսնցուցած էի հաւատքս,  
սխալ քայլի դիմելու վրայ էի.  
որովհետեւ նախանձեցայ անօրէններուն,  
երբոր տեսայ ամբարիշտներուն յաջողութիւնը:  
Որովհետեւ անոնք ցաւ չեն տեսներ,  
նոյնիսկ մահուան ժամանակ.  
մտեղ եւ առողջ են անոնց մարմինը:  
Նեղութիւն չունին ուրիշներուն պէս,  
եւ չեն տառապիր ուրիշ մարդոց պէս:  
Ահա թէ ինչու՝ ամբարտաւանութիւնը իրենց վիզէն կախեր են,  
եւ բռնութիւնը վերարկուի պէս իրենց վրայ առեր են:  
Անոնց աչքը չարիքէն չի կշտանար,  
անոնց միտքը ամբարիշտ խորհուրդներով կը յորդի:  
Ծաղրանքով ու չարութեամբ կը խօսին,  
գոռոզ կերպով սպանալիք տեղացնելով:  
Իրենց բերանը երկինքին դէմ կը բանան,  
իրենց լեզուն երկրի վրայ չարիք կը սփռէ:  
Այնպէս որ, իմ ժողովուրդս անոնցմէ օրինակ կ'առնէ,  
անոնց խօսքերը ներծծելով ջուրի պէս:  
Անոնք կ'ըսեն.– «Աստուած ի՞նչպէս պիտի գիտնայ մեր ըրածը.  
Բարձրեալը բնաւ չի կրնար գիտնալ»:  
Ահա նոյն այս ամբարիշտները յաջողութիւն կը գտնեն  
եւ կը բազմացնեն իրենց հարստութիւնը:  
Ուրեմն գո՞ւր տեղ ես իմ սիրտս մաքուր պահեցի,  
եւ ձեռքերս մեղքի մէջ չթաթախեցի:  
Զարչարուեցայ օրն ու բուն,  
պատժուեցայ ամէն բացուող օրուան հետ:  
Եթէ ըսած ըլլայի՝ «Ես ալ անոնց պէս պիտի խորհիմ»,  
քու ժողովուրդիդ անհաւատարիմ եղած պիտի ըլլայի:  
Այս մասին շատ մտածեցի եւ փորձեցի հասկնալ,  
բայց ինձի շատ դժուար թուեցաւ:

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:



**ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ 73:1-16**

Այս Սաղմոսի հեղինակը Ասաֆն է, որուն կը վերագրուի էթ Սաղմոսներ, 50, 73-83 Սաղմոսները: Ասաֆը փառարկեալ երաժշտապետներէն մէկն էր Դաւիթի օրով (Ա Մնց 6:39, 16:5-6, Բ Մնց 5:12): Այս Սաղմոսը կը ներկայացնէ Ասաֆի պոռթկումը ի փես ամբարիշտին, ու անոր ունեցած վայելքին, կարծէք փեսակ մը անարդար վիճակի մը, որուն համար ալ հետաքրքրականօրէն այս Սաղմոսի վերնագիրը Արդարութեան Յաղթանակը վերնագրուած է: Այսինքն՝ աւարտին Արդարութիւնն է որ կը յաղթանակէ ու պիտի յաղթանակը: Ասաֆի միտքը լեցուն նախանձով ու կասկածով: Բայց այս բոլորը կը փարափին երբ կը վերադառնայ Աստուծոյ: Այս Սաղմոսը մեզի կը փոխանձէ եօթը դասեր:

- ա.- Սրբի մաքրութիւն
- բ.- Համբերութիւն
- գ.- Աստուծոյ վստահութիւն
- դ.- Վերադարձ առ Աստուած, Աստուծոյ պաշտամունք
- ե.- Ջղջում, խոստովանութիւն
- զ.- Շնորհակալ ըլլալ
- է.- Բաւարարուիլ փրուածով եւ ունեցածով

Ասաֆ նախ ամէն բանէ առաջ կը խոստովանի Աստուծոյ բարութիւնը, մանաւանդ անոնց որոնք սրբով մաքուր են: Սակայն այս սրբի մաքրութիւնը կու գայ նոյնինքն՝ Աստուծմէ, երբ կը խնդրենք որ սիրտ սուրբ հաստատար ի մէջս ով Աստուած: Սկիզբը ան կը ներկայացնէ Աստուծոյ բարութիւնը Իր ժողովուրդին, յետոյ կը մասնաւորէ՝ սրբով մաքուրներուն: Ահա ճիշդ այսպիսի պահերուն է, որ երբ նախանձը կու գայ մեր մէջ հաւաքքը խախտելու, եւ այլ ուրիշ բաներու մասին մտածելու, բայց երբ Աստուծոյ կը վերադառնանք, ու կը խնդրենք որ մեզի փայ սրբի մաքրութիւն, որպէսզի անմաքուր բաներու մասին չմտածենք: Ասաֆ ցաւ կը զգայ երբ կը փեսնէ, թէ ինչպէս ամբարիշտե, անօրէնք որ նոյնիսկ զԱստուած կ'անարգէ, Աստուծոյ կը հայհոյէ, բայց յաջողութիւններ կը գտնէ: Այսպիսի երեւոյթ մը անարդար է: Ահա այսպիսի պահուն է, որ Աստուած կու գայ ցոյց տալու թէ ամէն ինչին ժամանակը կայ, ուրեմն համբերութիւն է պէտք: Ահա այսպիսի պահերուն եւս ամբողջական վստահութիւնը ունեւարու Աստուծոյ ամենագործութեան, ամենակարողութեան, որովհետեւ, այդպիսիները նոյնիսկ կու գայ ըսելու, «Աստուած չի կրնար գիտնալ մեր ըրածը», Աստուած չի փեսներ մեր ըրածը: Ահա Ասաֆ կը փառարկէ երբ այսպիսիներ առաւել յաջողութիւն կը գտնեն: Բայց պէտք չէ մտնալ, որ նոյնիսկ եթէ չարը որ ժամանակաւորապէս իշխող դերի մէջ է, բայց աւարտին Աստուծոյ կամքն է որ կը կատարուի, ու պիտի կատարուի, որովհետեւ այդ բոլորին մէջ Աստուած ծրագիր մը ունի: Այնքան արեւն որ չունիմ Աստուծոյ իմաստութիւնը եւ կապը Աստուծոյ հետ պիտի չկարենամ հասկնալ թէ այս բոլորը ինչո՞ր կը կատարուին: Ուրեմն պէտք է վերադառնալ Աստուծոյ, եւ Աստուծոյ պաշտամունքին մէջ գտնել մեր խաղաղութիւնը: Ուրեմն, պաշտամունքները պէտք չէ ըլլան սոսկ արարողակարգ, պարզապէս աղօթքի, շարականի, մաղթանքի կամ երգեցողութեան ժամ, այլ՝ գտնելու մեր ներքին խաղաղութիւնն ու անդորրը: Ասաֆ նաեւ կը խոստովանի ու կը զղջայ իր մեղքը, որ իր ունեցած նախանձը, որ իր դառնացած հոգիին արտայայտութիւնն էր, յիմարացած էր եւ մտնցած որ Աստուած իր հետն է: Ահա այդ խոստովանութենէն ետք է որ Աստուած միտքս եւ մտածելակերպս պիտի փոխէ: Այնքան արեւն որ չեմ խոստովանած, պիտի մնամ նոյն վիճակիս մէջ: Ահա այս վիճակին մէջ Ասաֆ կը խոստովանի եւ շնուհակալութեամբ կ'արտայայտուի, որ Աստուած Իր ողորմութեամբ եւ խորհուրդներովը կ'առաջնորդէ զինք, եւ փառքով ալ պիտի ընդունի զինք: Ի վերջոյ, Ասաֆ կը բաւարարուի որ իր ունեցածը եւ իր ուզածը ուրիշ բան չէ, այլ միայն Աստուած, «Երկինքի մէջ քեզմէ զար մէկը չունիմ, երկրի վրայ ալ քեզմէ զար մէկը չեմ ուզեր»: Տակաւին, կը խոստովանի ըսելով. «Մարմինս եւ միտքս կը փկարանան, բայց իմ մտքիս յենարանը եւ իմ միակ ունեցածս՝ Աստուած է յաւիտեան»: Եւ Անոր բոլոր գործերուն մասին պատմելու:

Ասաֆ խոնարհութեամբ կը դիմէ Աստուծոյ, որ Աստուած իր սիրտը մաքրէ նախաձի ու արեւոյթեան վիճակէն: Սրբի մաքրութիւն նաեւ կը նշանակէ մաքրի մաքրութիւն: Երբ մտքերս կամ մտքիս խորհուրդները կ'առաջնորդուին Աստուծմով, ահա այն արեւն նաեւ կրնամ դէմ դնել Չարին ներկայացուցած փորձութիւններուն: Մաքուր սիրտը այն սիրտը չէ, որ մեղք չունի, այլ այն սիրտը որ Աստուծմէ կը խնդրէ որ մաքրէ: Դաւիթ պիտի ըսէ. «Սիրտ սուրբ հաստատար իմ մէջս ով Աստուած»: Դաւիթ եւս կը զգուշացնէ ըսելով. «Սիրտդ մի նեղեր չարերուն համար, ոչ ալ նախանձէ անօրէն մարդոց, որովհետեւ անոնք շուտով պիտի խամրին խորի պէս» 37:1-9: